



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ս. Էջմիածին, Ս. Զատիկ 1979

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան
Պատրիարք Երուսաղէմի Հայոց
Երուսաղէմ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ»

Սիրելի Սրբազան Եղբայր,

Այսօր մեծ առաւօսն է մեր հոգիներուն, զի խաչեալն Քրիստոս յաղ-
թելով մահն ու չարիքը աշխարհի, յարութիւն առաւ մեռելներէն եւ մեզ
պարգեւեց մեծ յոյսը յաւիտեանական կեանքի:

Մեր սիրքը լի այս լոյս հաւաստով, Քրիստոսաւետ Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնէն Ձերդ Ամենապատուութեան եւ Ձեր զինուորեալ Միաբանութեան
կը բերենք մեծ աւետիսը այս աշխարհաստան եւ Մեր աղօթքը ջերմ, որ մեր
Փրկչին Յիսուսի յարութեան շնորհները առասպալէս իջնեն մեր Մայր եկեղեց-
ւոյ եւ անոր սպասաւորներուն եւ անոր հաւաստեալ զաւակներուն վրայ,
որպէսզի անոնք բոլորը դառնան «լուսոյ որդիներ» եւ ապրին ու գործեն այս
երկրային կեանքը յարութեան տեսլիքով, որ գերագոյն երաշխիքն է երկրային
առաքինազարդ ու ստեղծարար կեանքի:

Սուրբ Յարութեան շնորհները բոլր հառազայթեն⁷ նաեւ Ս. Աթոռիդ եւ
ձեր հաւաստեալ ժողովուրդի համայնօրէն ու ընտանեկան կեանքէն ներս,
որպէսզի այդ շնորհներով առաւել անին ու զօրանան անոնց քրիստոնէական
առաքինութիւններն ու հայկական ոգեկանութիւնը:

Եղբայրական սիրոյ ուղջոյն՝ Ձերդ Ամենապատուութեան եւ հայրապե-
սական օրհնութիւններ Սուրբ Աթոռիդ բարեջան Միաբանութեան եւ համայն
հայ հաւաստեալ մեր զաւակներուն որ յերուսաղէմ:

«Զխաղաղութեան զնե՛ս երթայք ընդ ամենեւին եւ զարբութեան, առանց
որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Եբր., ԺԳ. 14) եւ «եղբայրութիւն հաստատեցէ
առ ձեզ» (Եբր., ԺԳ. 1). ամէն:

«Փառք Յարութեան ՔՁ, Տէր»:

Վ. Ա. Զ. Գ. Է. Ն. Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ